ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/175

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20769-18 գրությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի 08.11.2018թ. թիվ 1.1/4848-18 գրության պատճենի հիման վրա, 15.11.2018թ. թիվ 27/26-3/20769-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 20.11.2018թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ազգային ժողովի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 23.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, համաձայն որի «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /23.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ /13,000 ՀՀ դրամ/:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.11.2018թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային պարտավորություններ, իսկ նույն արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը ...:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 23.10.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 13,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի մոտ 13,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով (համապատասխան ապացույցը կցվում է):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 23.10.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի (կցվում է): Եվ պետք է նշել, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տվյալները, ըստ որի՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /23.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Այսինքն այստեղ ակնհայտորեն առկա է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի առկա պարտավորության մասին

տեղեկացված չլինելու փաստը, քանի որ վերջինիս կողմից որպես հիմք ընդունվել է «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ ..... Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ. թիվ 3 արձանագրությամբ՝ Պատվիրատուն չսպասելով Կարգի 45-րդ կետով սահմանված՝ նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրի ավարտին, նույն արձանագրությամբ՝ որոշել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ դրանով իսկ խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները և «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնման կարգը»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 21.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդեց ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 20.11.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ավելացնելով, որ գնումների

հետ կապված բողոքներ քննող անձին կներկայացվի նաև Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված փաստերը.</u>

ՀՀ Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.11.2018թ. թիվ 1.1/4848-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից ըմպելու ջրի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից 30.10.218թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին կատարված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն, որի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 20-րդ կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.11.2018թ. ժամը 12:00-ին տեղի

ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ մերժել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից 07.11.2018թ. գրությամբ Պատվիրատուին ներկայացվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 06.11.2018թ. տրամադրած թիվ 2973 և թիվ 2972 տեղեկանքները՝ համապատասխանաբար 23.10.2018թ. և 05.11.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավելի վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 21-րդ կետով՝ Ընկերության տվյալները համապատասխան հիմքերով տրամադրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 21.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ ազգային ժողովի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով ***23.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 30.10.218թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ

կետի հիման վրա 01.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 13 000 ՀՀ դրամի չափով:***

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 05.11.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ մերժել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20769-18 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի 08.11.2018թ. թիվ 1.1/4848-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի 20.11.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման

չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, ՀՀ ազգային ժողովի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***23.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 550 620 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 30.10.218թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 30.10.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 20-րդ կետի հիման վրա 01.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 13 000 ՀՀ դրամի չափով:***

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 05.11.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ մերժել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 23.10.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 13 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 23.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության 06.11.2018թ. թիվ 2973 տեղեկանքը, համաձայն որի «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի 23.10.2018թ. դրությամբ ունեցած 13 000 ՀՀ դրամ պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 23.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել

ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20769-18 գրությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00136902) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ